

րեմք իսկ հաւատալ այդմ, թէ եւ աչօք բացօք տեսեալ էր մեր զայդ շնորհիւ Մովսէս վարդապետի անձանօթի իւրոց պարտականութեանցն:

78. «Զայս ամենայն խոնարհաբար ծանուցանելով Սրբազնակատար քահանայապետիդ, որպէս զլիւաւորի քահանայութեան հայկականս ազգի, ազաչեմք թախանձագին թոյլ տալ մեզ ըստ մերոյս սովորութեան պարապել աստուածային գրոց ուսանելոյ և մի խլել ի մէնջ զմիակ միսիթարութիւնն մեր և զհոգեւորական շինութիւն, զոր քաղեմք ի վարդապետութեանց մարդացելոյն վասըն մեր Աստուծոյ:

79. «Վեհափառ Տէր, հաւատամք թէ քաղաքագէտք իցէք, թէ բռնութիւնք թագաւորաց և հալածանք բարբարոսականք չը ժուժեցին ստնանել քրիստոնէական բանին տարածման ի խաւար դարս յառաջինս, հաւատամք թէ գիտէք ինքնին, զի բիրդ ընթացք և բռնութիւնք վարդապետին Մովսիսի նուազ լիցին, քոն որոնց ի հուր և ի սուր մատնէին զքրիստոնէայս, սակայն ոչինչ զօրեցին խափան լինել աճելոյ և զօրանալոյ բանին Աստուծոյ: Թողումք զի ի ժամանակիս անազանեալ են բռնութիւնք ի փակել զճանապարհն ճշմարտութեան, այդոքիկ անքրիստոնեայ նեղութիւնք յարուցեալք ի վերայ մեր միմիայն կարեն արդիւնաւորել զպտուղ, այն է զչարաչար գալթակղութիւն՝ հետեւելովք հանդերձ: Ակն ունելով թէ եւ յաջորդ սրբոց առաքելոց Թագէտսի և Բարգուղիմէոսի նոցին ընթացակից լեալ ի հովութեան սատար գտցի քրիստոսեան ընկերութեանս»:

Ստորագրութիւն 15 անձանց Շամախեցոց:

80. Որպէս և է, բայց գոնէ այս խնդրագրից յետոյ հայոց հոգեւոր իշխանութիւնը թէ որ լուրջ մտածէր, կարող էր աւելի խոհեմ և հեռատես միջոցներով գործին նպատակաւորմար ուղղութիւն տալ և չճատանալ լոկ անգօր և ապարդիւն կարգադրութիւններով: Բայց թնչ արուեսցաւ: Վերոյիշեալ խնդրագրի պատճենն ուղարկուեցաւ Մաղաքեանին, որ հետագօտէ թէ ցո՞ր աստիճան իրաւացի համարին բանք գանգատաւորացն, այլ և առանձնակի